ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 651-Ա 05 նոյեմբերի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՏՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 – Ն որոշման 146-րդ և 147-րդ կետերը

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ 2026 թվականի պետական բյուջեով վերանորոգվող «Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Ձորագյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Սևան համայնքի Հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Ծովագյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Զովաբերի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Կարմիրգյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ թվով 6 մանկապարտեզներ) շենքերի շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ 2026 թվականի պետական բյուջեով վերանորոգվող թվով 6 մանկապարտեզների շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ 2026 թվականի պետական բյուջեով վերանորոգվող թվով 6 մանկապարտեզների ընդունումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

05.11.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի նոյեմբերի 5 - ի
N 651-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՏՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ, **հանձնաժողովի նախագահ**

Հակոբ Հարությունյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Գուրգեն Մելքոնյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետ

Հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև՝
-համապատասխան համայնքապետարանի ներկայացուցչին /համաձայնությամբ/,
-մանկապարտեզի տնօրենին,
-կապալառու կազմակերպության ներկայացուցչին /համաձայնությամբ/,
-օբյեկտի վերահսկման ծառայություն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին /համաձայնությամբ/:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-11-05 14:36:49 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ